ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<< 09 >> օգոստոսի 2013թ. N 65 Ա

ք. Արմավիր

ՄՈՎՍԵՍ ՔԱՐՏԱՇՅԱՆԻՆ ԵՎ ԱՐՍԵՆ ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ ԵՐԵՎԱՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածի առաջին մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարի 2013 թվականի օգոստոսի-ի N 1/31/6961-13 գրությունը.

կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի տեղակալ Մովսես Քարտաշյանին և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ Արսեն Ղուկասյանին 2013 թվականի օգոստոսի 9-ին գործուղել քաղաք Երևան՝ «Անի Պլազա» հյուրանոցում կայանալիք «Աղետների ռիսկի նվազեցման գործընթացներում գենդերային հարցերի ուղղությամբ ջանքերի համատեղում և համակարգում» աշխատաժողովին մասնակցելու նպատակով:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը (պետի պաշտոնակատար՝ Հ. Հարությունյան) սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարում:
3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ՝ Լ. ՄՈՒՐԱԴՅԱՆ